

3.

### ՉՄՅԵՐԵՆ ԲԱՐՔԱՆՆԵՐՈՒ ԵՐԵՔ ՄԻՒՂԵՐԸ

Առհասարակ մեր մէջ հայերէն բարբառները երկու ճիւղի կը բաժնեն. Արեւելեան կամ Ռուսահայ բարբառներ և Արեւմտեան կամ Տաճկահայ բարբառներ: Այս անուններն ըստ իս սխալ և անյարմար են, թէև ամէն տեղ ընդունուած ու տարածուած: Արեւելեան կամ արևմտեան կոչումը սխալ է անյարմար և անտարբեր: որ այսպէս կոչուած բարբառներէն շատերը կը գտնուին երկայնութեան միևնոյն աստիճաններուն վրայ և իրարու հետ համեմատելով արեւելք կամ արևմուտք չեն իյնար: Օրինակի համար Վանայ բարբառն ու Պայազիտի ենթաբարբառը երկուքն ալ կը գտնուին երկայնութեան 44-րդ աստիճանին վրայ, բայց առաջինը կոչուած է արևմտեան բարբառ, իսկ երկրորդը՝ արեւելեան: Աւելի զարմանալի պարագաներ ալ կան. օրինակի համար Արթվինը շատ աւելի արևմուտք է՝ քան թէ Ախալքալաքն ու Ալէքսանդրապոլը, բայց վերի բաժանմունքով Արթվինը կը կոչուի արեւելեան բարբառ, մինչդեռ Ախալքալաք և Ալէքսանդրապոլ արևմտեան գաւառականներ կը համարուին:

Ռուսահայ և տաճկահայ բարբառներ յորջորջումը աւելի տարօրինակ է և իրականութեան լիովին անհամապատասխան: Ռուսիոյ մէջ գտնուած հայոցմէ շատերը կը խօսին տաճկահայ բարբառներ, ինչպէս որ Տաճկաստանի հայոցմէ ոմանք ալ կը խօսին ռուսահայ բարբառներ: Օրինակի համար Ռուսիոյ մէջ Նոր-Նախիջևան, Խրիմի թերակղզին, Սոխում, Բոթում, Ախալքալաք, Ախալքալաք, Ալէքսանդրապոլ, Կարս և Նոր-Բայազիդի գիւղերը տաճկահայ բարբառներ կը խօսին. նոյնպէս Տաճկաստանի մէջ Պայազիդ, Պուրտուր, Էօտէմիշ ռուսահայ բարբառներ կը խօսին: Ասիկէ զատ Պարսկահայ, Պուլկարահայ, Ռուսահայ, Եգիպտահայ, Ամերիկահայ գաղթականութիւնները անտես կը մնան և Ռուսահայ կամ Տաճկահայ անունին տակ առնուած են անյարմար կերպով:

Կ'առաջարկեմ հոս ուրիշ նոր անուն՝ որ ոչ միայն յիշեալ անպատեհութիւնները կը ջնջէ, այլ և սն առաւելութիւնն ունի որ իր մէջ կը կրէ բարբառներու տեսակը որոշող գլխաւոր յատկանիշը. այն է՝

**Ա. Ում՝ ճիւղ.** այս անունով կը հասկնանք արեւելեան կամ ուսահայ կոչուած բարբառներուն ամբողջութիւնը:

**Բ. Նր ճիւղ.** այս անունով կը հասկնանք արեւմտեան կամ տաճկահայ կոչուած բարբառներուն ամբողջութիւնը:

Ում ճիւղին պատկանող բարբառներուն մէջ ներգոյական հոլովը, ինչպէս և ներկայ ու անկատար ժամանակները կը շինուին ում՝ մասնիկով. ասիկա նոյն բարբառներուն հիմնական յատկանիշն է, ուստի և նոյն անունով կրնան կոչուիլ: Իսկ կը ճիւղին պատկանող բարբառները ներգոյական հոլով չունին, ում՝ մասնիկը չեն ճանչնար և ներկայ ու անկատար ժամանակները կը կազմեն կը մասնիկով. ասիկա ալ իրենց հիմնական յատկանիշն է, ուստի և նոյն անունով կոչեցիք:

Բայց այս երկուքէն զուրս կայ նաև երրորդ ճիւղ մը, որուն պատկանող բարբառները ոչ ում՝ ունին և ոչ կը. այլ ներկայ ու անկատար ժամանակները կը կազմեն անորոշ գերբայի կամ անհրեւոյթի միջոցով և եմ՝ էական բային յարադրութեամբ: Մեր մէջ բարբառներու այս ճիւղը առհասարակ զանազանուած չէ և կը կցուի Ում՝ ճիւղին: Մենք կ'առաջարկենք հոս Մը ճիւղ անունը:

Տարակոյս չկայ որ մեր այս բաժանումը և նոր անուանակոչութիւնը կը պատկանին միայն բարբառներուն և գործ չունին գրական լեզուներուն հետ: Ասոնց համար արեւելեան ու արեւմտեան կամ ուսահայ և տաճկահայ կոչումները դեռ բաւական յարմար կը հնչեն, որովհետև առաջինին կեդրոնը Քիֆլիսն է, իսկ երկրորդինը՝ Պօլիս:

